Ռափայել Պատկանյան

Մի՛ կարծեք, որ ես . . .

Մի՛ կարծեք որ ես սին փառքի համար,
Իմ հառաչանքով լցրի հայ աշխարհ .
Այս հեգ ամբոխի ծափին ու գովքին
Կարոտ չէր բընավ իմ հրպարտ հոգին . . .

Այո՛, իմ քնարի տրխուր ձայները
Ցընցեցին հայի հոգու լարերը,
Արյուն էլ ազնիվ սրրտե քամեցին,
Կրտրիճի աչքե քունը փախուցին:

Ինչո՞ւ . չգիտեմ: Ասե՛ք, հե՞ր բարդ-բարդ
Բացվում է գարնան կարմիր, հոտոտ վարդ,
Լեռնիվայր ինչո՞ւ անուշ կարկաչով
Վազում է առուն դալարի միջով:

Ջեփյուռը ինչո՞ւ տերևե-տերև
Անցնելով, ասես, տալիս է բարև,
Ինչո՞ւ սոխակն էլ մոտ կանաչ թրփին
Անմրռունչ ձայնում է յուր մեղեդին . . .